

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ԿՈԼԵԳԻԱ

### ՈՐՈՇՈՒՄ

26 հուլիսի 2016 թվականի

թիվ 89

քաղ. Մոսկվա

#### Չափման միջոցի ստուգաչափման կազմակերպման կարգը հաստատելու մասին

«Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականությունն վարելու մասին» արձանագրության 9-րդ կետի 3-րդ ենթակետի իրականացման նպատակներով («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 16-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացված՝ «Չափման միջոցի ստուգաչափման կազմակերպման կարգը»:

2. Սահմանել, որ չափման միջոցի ստուգաչափման վերաբերյալ փաստաթղթերը, որոնք, Եվրասիական տնտեսական միության անդամ պետության

օրենսդրությանը համապատասխան, տրվել են մինչև սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրը, գործում են մինչև դրանց գործողության ժամկետը դադարելու օրը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններն ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի նախագահի ժ/պ՝

Կ. Մինասյան

ՀԱՍՏՏԱՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի  
2016 թվականի հուլիսի 26-ի  
թիվ 89 որոշմամբ

## ԿԱՐԳ

### չափման միջոցի ստուգաչափման կազմակերպման

1. Սույն Կարգը մշակվել է «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» արձանագրության 9-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված), սահմանում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում չափման միջոցի ստուգաչափման կազմակերպման կանոնները (այսուհետ համապատասխանաբար՝ ստուգաչափում, անդամ պետություններ) եւ տարածվում է այն չափման միջոցների վրա, որոնք պատրաստվել են անդամ պետությունների տարածքներում:

2. Սույն Կարգի նպատակներով չափման միջոցին ներկայացվող չափագիտական պարտադիր պահանջներ ասելով պետք է հասկանալ չափման միջոցների տեսակի նկարագրում նշված չափման միջոցի չափագիտական պահանջները (բնութագրերը) (այսուհետ համապատասխանաբար՝ չափագիտական պարտադիր պահանջներ, տեսակի նկարագիր):

Սույն Կարգում օգտագործվող այլ հասկացություններ կիրառվում են «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) սահմանված իմաստներով:

3. Սույն Կարգին համապատասխան՝ ստուգաչափման ենթակա են այն չափման միջոցները, որոնց նկատմամբ իրականացված է այդ չափման միջոցների տեսակի հաստատման փոխադարձ ճանաչում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններին համապատասխան:

4. Ստուգաչափումն անցկացվում է անդամ պետությունների այն իրավաբանական անձանց կողմից, որոնք լիազորված են (ծանուցված են) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան (այսուհետ՝ լիազորված կազմակերպություն):

5. Ստուգաչափման ընթացքում սահմանվում է չափագիտական պարտադիր պահանջներին չափման միջոցի համապատասխանությունը:

6. Ստուգաչափման ժամանակ օգտագործվում են մեծությունների միավորների այնպիսի չափանմուշներ, որոնց համար ապահովվում է դրանց օգնությամբ ստացվող չափումների արդյունքների չափագիտական հետեւելիությունը՝ Միավորների միջազգային համակարգի (ՄՀ), ազգային (առաջնային) չափանմուշների եւ (կամ) մեծությունների միավորների միջազգային չափանմուշների նկատմամբ:

7. Ստուգաչափումները ստորաբաժանվում են առաջնայինների եւ հաջորդողների:

8. Առաջնային ստուգաչափումն անցկացվում է՝

ա) չափման միջոցի արտադրությունից բացթողնման ժամանակ.

բ) չափման միջոցը շահագործման մեջ դնելու ժամանակ (եթե չափման միջոցի արտադրությունից բացթողնման ժամանակ ստուգաչափում չի անցկացվել).

գ) չափման միջոցի վերանորոգումից հետո:

9. Հաջորդող ստուգաչափումն անցկացվում է առաջնային ստուգաչափում անցկացնելու պայմանով եւ ստորաբաժանվում է հետեւ յալ կերպ՝

ա) պարբերական.

բ) արտահերթ.

գ) չափման միջոցի վերանորոգումից հետո անցկացվող.

դ) ստուգաչափում՝ ստուգաչափման նշանները կամ դրոշմները վնասվելու դեպքում՝ չափման միջոցների, այդ թվում՝ ծրագրային ապահովման կարգավորումների վայրերը չթույլատրված հասանելիությունից պաշտպանելու համար:

10. Պարբերական ստուգաչափումն անցկացվում է շահագործման մեջ գտնվող չափման միջոցների նկատմամբ՝ չափման միջոցի տեսակի հաստատման սերտիֆիկատում նշված միջստուգաչափական ժամանակամիջոցի ավարտից հետո:

11. Արտահերթ ստուգաչափումն անցկացվում է չափման միջոցի տիրապետողի (օգտագործողի) կամ այլ շահագրգիռ անձի նախաձեռնությամբ՝ մինչեւ ստուգաչափման վկայականի գործողության ժամկետը լրանալը:

12. Չափման միջոցի վերանորոգումից հետո ստուգաչափումն անցկացվում է առաջնային ստուգաչափման ծավալով:

13. Չափման միջոցի ստուգաչափումն անցկացվում է տիրապետողի (օգտագործողի) կամ այլ շահագրգիռ անձի (այսուհետ՝ հայտատուներ) հայտի հիման վրա:

14. Ստուգաչափում անցկացնելու համար հայտատուի կողմից լիազորված կազմակերպություն են ներկայացվում՝

ա) հայտ (նշելով չափման միջոցի անվանումը, հայտատուի մասին տեղեկությունները (իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը (հասցեն) կամ ֆիզիկական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում),

բնակության վայրը, հեռախոսի եւ ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում)), ինչպէս նաեւ նշելով անդամ պետությունների կողմից ստուգաչափումը ճանաչելու անհրաժեշտությունը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններին համապատասխան)։

բ) նախորդ ստուգաչափման վերաբերյալ վկայական (առկայության դեպքում)։

գ) չափման միջոցը լրակազմությամբ՝ տեսակի նկարագրին համապատասխան։

դ) չափման միջոցի վերանորոգման անցկացման վերաբերյալ տեղեկատվություն (եթե չափման միջոցը ենթարկվել է վերանորոգման)։

15. Ստուգաչափման արդյունքում չափման միջոցի չափագիտական պարտադիր պահանջներին համապատասխանության հայտնաբերման դեպքում դրա վրա՝ լիազորված կազմակերպության կողմից դրվում է ստուգաչափման նշան եւ (կամ) ձեւ ակերպվում է վկայական՝ հավելվածի համաձայն սահմանված ձեւով (այսուհետ՝ վկայական)։ Ստուգաչափման նշանները կարող են նաեւ դրվել չափման միջոցի վրա՝ տեսակի նկարագրում նշված հատվածներում՝ չափման միջոցի, այդ թվում՝ ծրագրային ապահովման կարգավորումների վայրերը չթույլատրված հասանելիությունից պաշտպանելու համար։

16. Ստուգաչափման արդյունքում չափման միջոցի չափագիտական պարտադիր պահանջներին (մեկին կամ մի քանիսին) անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում լիազորված կազմակերպության կողմից ձեւ ակերպվում եւ հայտատուին է տրվում համապատասխան ծանուցագիր, չեղյալ է ճանաչվում նախորդ ստուգաչափման այն վկայականը, որի գործողության ժամկետը չի լրացել, մարվում է ստուգաչափման նշանը։

17. Ստուգաչափման նշանի ձեռք էլ այն կիրառելու, դնելու եւ մարելու եղանակները սահմանվում են անդամ պետության կողմից:

Կիրառվող ստուգաչափման նշանների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է անդամ պետության չափումների միասնականության ապահովման ոլորտի տեղեկատվական ֆոնդում:

18. Ստուգաչափում անցկացնելու ժամանակ լիազորված կազմակերպությունը՝

ա) կատարում է ստուգաչափման այն ընթացակարգերը, որոնք նշված են ստուգաչափման մեթոդիկայում.

բ) կատարում է չափումների արդյունքների գրառումներ, ձեւակերպում է ստուգաչափման արձանագրություն՝ ստուգաչափման մեթոդիկայով նախատեսված ձեւով.

գ) ձեւակերպում է ստուգաչափման արդյունքը.

դ) կատարում է աշխատանքներ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովմանն ուղղված աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններին համապատասխան՝ չափման միջոցի ստուգաչափման արդյունքների ճանաչման նպատակով.

ե) անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից ստուգաչափման արդյունքների փոխադարձ ճանաչման մասին ծանուցում ստանալուց հետո ստուգաչափման փոխադարձ ճանաչման մասին տեղեկությունները մուտքագրում է չափումների միասնականության ապահովման ոլորտի տեղեկատվական ֆոնդ՝ իր անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

զ) տրամադրում է հայտատուին չափման միջոցներ եւ վկայական կամ ծանուցագիր:

19. Ստուգաչափման արձանագրությունը եւ վկայականի պատճենները լիազորված կազմակերպության կողմից պահպանվում են վկայականի գործողության ժամկետի ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ անդամ պետության օրենսդրությամբ:

20. Ստուգաչափման արձանագրության պատճենը կարող է տրամադրվել հայտատուին իր պահանջով՝ լիազորված կազմակերպության ներքին ընթացակարգերով նախատեսված կարգով:

21. Հայտատուի կողմից ստուգաչափման անցկացման համար վճարումը կատարվում է լիազորված կազմակերպության հետ պայմանագրային հիմունքներով:

22. Վկայականը լրացվում է ռուսերենով եւ անդամ պետության օրենսդրության մեջ համապատասխան պահանջի առկայության դեպքում՝ այն անդամ պետության պետական լեզվով, որի տարածքում անցկացվում է ստուգաչափումը:

Վկայականը ռուսերենով եւ անդամ պետության պետական լեզվով լրացվում է վկայականի տարբեր կողմերում՝ սույն Կարգի 25-րդ կետին համապատասխան:

Անհրաժեշտության դեպքում չափման միջոցի տեսակի անվանումը եւ հայտատուի մասին տեղեկությունները կարող են նշվել լատինական այբուբենի տառերի օգտագործմամբ:

Վկայականը լրացնելու ժամանակ բառերի հապավումների օգտագործում (բացի ընդունվածներից) եւ տեքստի ուղղումներ չեն թույլատրվում:

23. Վկայականի կորստի կամ փչանալու դեպքում լիազորված կազմակերպության կողմից տրվում է այդ վկայականի կրկնօրինակը: Ընդ որում, վկայականի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է գրառում՝ «Կրկնօրինակը տրված է 20 թվականին»՝ նշելով վկայականի բնօրինակի համարը եւ տրման ամսաթիվը:



Վկայականի մեջ սխալների (վրիպակների) հայտնաբերման դեպքում թույլատրվում է դրա փոխարինում՝ փոխարինվող վկայականի համարի եւ տրման ամսաթվի նշմամբ:

24. Վկայականի բոլոր դաշտերը պետք է լրացված լինեն (վկայականի բնօրինակում դաշտերի համարակալումը բացակայում է):

25. Վկայականի մեջ նշվում են՝

ա) 1-ին դաշտում՝ մեկ տողով կատարված գրառում՝

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ».

բ) 2-րդ դաշտում՝ լիազորված կազմակերպության լրիվ անվանումը.

գ) 3-րդ դաշտում՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված՝ լիազորված կազմակերպության՝ ստուգաչափում անցկացնելու լիազորությունները հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները (անվանումը եւ համարը).

դ) 4-րդ դաշտում՝ 2 տողով կատարված գրառումներ՝

1-ին տող՝ «ՎԿԱՅԱԿԱՆ».

2-րդ տող՝ «չափման միջոցի ստուգաչափման մասին».

ե) 5-րդ դաշտում՝ վկայականի գրանցման համարը եւ դրա տրման ամսաթիվը:

Գրանցման համարը տառաթվային ծածկագիր է, որի նիշերի յուրաքանչյուր խումբն առանձնանում է կետով եւ ձեւ ավորվում է հետեւ յալ կարգով՝

առաջին եւ երկրորդ նիշեր՝ անդամ պետության 2-նիշանոց տառային ծածկագիրը՝ ISO 3166-1 միջազգային ստանդարտին համապատասխան.

երրորդ եւ հաջորդող նիշեր՝ ընթացիկ տարում ձեւ ակերպված վկայականի հերթական համարը (թվերի քանակը սահմանափակված չէ), որը հաջորդաբար ձեւ ավորվում է տարվա սկզբից (1 համարից):

Վկայականի տրման ամսաթիվը նշվում է բառաթվային եղանակով՝ օրը՝ արաբական երկու թվով (չակերտներում), ամիսը՝ բառով, տարին՝ արաբական չորս թվով (տարվա կրճատ նշումով՝ «թ.»)։

զ) 6-րդ դաշտում՝ չափման միջոցի անվանումը, տեսակը, գրանցման համարը, չափումների տիրույթը, ճշգրտության դասը եւ (կամ) սխալանքը՝ չափման միջոցների տեսակի հաստատման սերտիֆիկատին համապատասխան։

է) 7-րդ դաշտում՝ չափման միջոցի գործարանային համարը։

ը) 8-րդ դաշտում՝ հայտատուի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն), ֆիզիկական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի նույնականացման համարը (այն դեպքում, եթե նման համարի նշումը նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ) կամ ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը։

թ) 9-րդ դաշտում՝ ստուգաչափման մեթոդիկայի անվանումը եւ նշագիրը։

ժ) 11-րդ դաշտում՝ վկայականի գործողության ժամկետը (նշվում է բառաթվային եղանակով՝ օրը՝ արաբական երկու թվով (չակերտներում), ամիսը՝ բառով, տարին՝ արաբական չորս թվով (տարվա կրճատ նշումով՝ «թ.»)։

ժա) 12-րդ դաշտում՝ ստուգաչափման նշանը։

ժբ) 13-րդ դաշտում՝ ստուգաչափումն անցկացրած լիազորված կազմակերպության անձի ստորագրությունը, ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում)։

ժգ) 14-րդ դաշտում՝ վկայականը տրամադրած լիազորված կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը, ստորագրությունը, ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում)։

ՀԱՎԵԼՎԱԾ

Չափման միջոցի ստուգաչափման  
կազմակերպման կարգի

ՁԵՎ

չափման միջոցի ստուգաչափման վկայականի

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1)

\_\_\_\_\_ (2)  
(չափման միջոցների ստուգաչափում անցկացնելու համար լիազորված կազմակերպության լրիվ անվանումը)

\_\_\_\_\_ (3)  
(ստուգաչափում անցկացնելու լիազորությունները հաստատող փաստաթուղթ)

ՎԿԱՅԱԿԱՆ(4)

չափման միջոցի ստուգաչափման

թիվ \_\_\_\_\_ «\_\_\_\_» \_\_\_\_\_ թ. (5)

\_\_\_\_\_ (6)  
(չափման միջոցի անվանումը, տեսակը, գրանցման համարը, չափումների տիրույթը,  
ճշգրտության դասը եւ (կամ) սխալանքը)

գործարանային համարը \_\_\_\_\_, (7)


պատկանող \_\_\_\_\_ (8)

Ստուգաչափումն անցկացվել է ստուգաչափման \_\_\_\_\_

մեթոդիկային համապատասխան \_\_\_\_\_ (9)

Ստուգաչափման արդյունքների հիման վրա ճանաչվել է, որ չափման միջոցը  
համապատասխանում է չափագիտական պարտադիր պահանջներին: (10)

Գործողության ժամկետը՝ մինչև \_\_\_\_\_ թվականի \_\_\_\_\_ «\_\_\_\_»-ը (11)



(12)

\_\_\_\_\_  
(լիազորված կազմակերպության ստուգաչափում  
անցկացրած անձի ստորագրությունը)

(13)

\_\_\_\_\_  
(Ա. Ա. Հ.)

(14)

\_\_\_\_\_  
(լիազորված կազմակերպության կառուցվածքային  
ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(Ա. Ա. Հ.)

\_\_\_\_\_